ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Գ. Ոստան

02.06.2011թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Պ-Ն Է.ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ

Հայտնում ենք այն մասին, որ ՀՀ Արարատի մարզի Ոստան համայնքում 2011թ. մայիսի 23-ին տեղի ունեցավ հանրային լսում, որին մասնակցում էին համայնքի բնակիչներ, մանկավարժներ, ավագանու անդամներ և Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ.Դանիելյանը:

Հանրային լսման ժամանակ քննարկվեցին համայնքի զարգացման մի շարք խնդիրներ՝ մասնավորապես մանկապարտեզի շենքի վերանորոգման, սելավատարի վրա կամրջի վերակառուցման, ինչպես նաև 2010թ. տարեկան և 2011թ. առաջին եռամսյակի համայնքի բյուջեների պլանների կատարման վերաբերյալ:

ՈՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ